

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ԱՐՄՍՍԱՏ-ը 2020թ. հունվար-հունիսին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2018թ. հուլիսի 1-ի դրությամբ	2 969.8	1 561.5	1 408.3
2019թ. հուլիսի 1-ի դրությամբ ^ժ	2 961.6	1 562.3	1 399.3
2020թ. հուլիսի 1-ի դրությամբ	2 963.0	1 564.0	1 399.0

1 000 մարդ

2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2019թ.¹

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
Հայաստանի Հանրապետություն	76.5	79.5	73.1
Քաղաքային	76.7	79.7	73.2
Գյուղական	76.0	79.1	72.7

տարի

3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2018թ. հունվար- հունիս	8.5	8.3	8.6
2019թ. հունվար- հունիս ^ժ	6.9	5.1	8.4
2020թ. հունվար- հունիս	9.2	7.9	10.4

1 000 կենդանի ծնվածի հաշվով

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2018թ. հունվար- հունիս	10.4	9.8	10.9
2019թ. հունվար- հունիս ^ժ	8.6	7.0	10.0
2020թ. հունվար- հունիս	10.5	8.9	12.0

1 000 կենդանի ծնվածի հաշվով

5.Մայրական մահացության գործակիցը, 2020թ. հունվար-հունիսին կազմել է 6.3 միավոր (1 դեպք),

100 000 կենդանի ծնվածի հաշվով, 2019թ. հունվար-հունիսի 25.0 միավորի (4 դեպք)^ժ համեմատ:

6.Ուսումնասության միջին տևողությունը դպրոցներում 2019/2020 ուսումն.տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2020թ. հունվար-մարտին կազմել է 428 337 դրամ (888 ԱՄՆ դոլար կամ 806 եվրո):

14. Գործազրկության մակարդակը² 2020թ. հունվար-մարտին (I եռամսյակ) կազմել է 19.8 %, ընդ որում կանանցը՝ 18.6 % և տղամարդկանցը՝ 20.8%:

15. 2020թ. հունվար-մարտին (I եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված² է եղել ՀՀ բնակչության 32.9 %-ը, այդ թվում կանանց՝ 28.4 %-ը և տղամարդկանց՝ 38.0%-ը:

¹ Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

² Ցուցանիշը հաշվարկվել է ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: 2018թ. հունվարից վերանայվել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտության շրջանակում: Վերանայման հիմքը Աշխատանքի վիճակագրիների միջազգային 19-րդ համաժողովում 2013թ. ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» (19-րդ ԱՎՄՀ) բանաձևի առանցքային դրույթներն են: Առավել մանրամասն պարզաբանումները տե՛ս 97-108-րդ էջերում: